ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի նախագծով <<Տնտեսական հարաբերություններ>> բաժնի ծախսերի վերաբերյալ







* Հաշվարկի համար հիմք է ընդունվել ՀՆԱ-ի ճշտված կանխատեսումը՝ 6.17 տրիլիոն դրամ



2021 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերը ծրագրվել են 1 տրիլիոն 843.1 մլրդ դրամ, ինչը կազմում է 2020 թվականի հաստատված ցուցանիշի 99.3 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշի 98.1 %-ը և գերազանցում է 2019 թվականի մակարդակը 13.1 %-ով կամ 213.7 մլրդ դրամով: Ընդ որում, 2021 թվականին «Տնտեսական հարաբերություններ» բաժնով նախատեսվում է 147.9 մլրդ դրամի ծախս, որը կազմում է բյուջետային ծախսերի 8.0 %-ը՝ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված 10.5 %-ի դիմաց: Վերոնշյալ 8.0 % մակարդակը գերազանցում է 2019 թվականի մակարդակը՝ 1.1 %-ային կետով իսկ 2018 թվականի ցուցանիշին՝ 0.3 %-ային կետով:

Տնտեսական հարաբերություններ բնագավառի ծախսերը 2021թվականի բյուջեի նախագծով ծրագրվել են ՀՆԱ-ի 2.4 %-ի մակարդակում, որը շուրջ 0.4 %-ային կետով զիջում է 2020 թվականի պետական բյուջեով հաստատված ցուցանիշին, իսկ 2018 թվականի և 2019 թվականի ցուցանիշներին գերազանցում է համապատասխանաբար՝ 0.8 և 0.7 %-ային կետերով:

2021 թվականին տնտեսական հարաբերությունների բնագավառի ծախսերի՝ 26.9 %-ը կամ 39.7 մլրդ դրամը նախատեսվում է տրամադրել «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն» խմբին: Ընդ որում, վերոնշյալ ցուցանիշը 2020 թվականի մակարդակին զիջում է 26.6 %-ով, սակայն 2019 թվականի համապատասխան ցուցանիշը գերազանցում է 24.5 %-ով:

«Վառելիք և էներգետիկա» խմբի ծախսերը 2021 թվականին նախատեսվում են շուրջ 2.4 մլրդ դրամ, կամ տնտեսական հարաբերությունների բնագավառի ծախսերի 1.6 %-ը: 2019 թ. փաստացիի և 2020 թվականի հաստավածի համեմատ վերոնշյալ ուղղությամբ ծախսերը պակաս են, համապատասխանաբար՝ 59.4 %-ով և 49.2 %-ով: Ընդ որում, «Միջուկային վառելիք» դասով նախատեսվում է կատարել 321.7 մլն դրամի ծախս, ինչի արդյունքում՝ 2021 թվականի ծախսերը՝ 2019 և 2020 թվականների համեմատությամբ կավելանան 0.3 %-ով:

<<Էլեկտրաէներգիա>> ծախսային ուղղությամբ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսվում է 2.1 մլրդ դրամ, ինչը 2019 թվականի ցուցանիշին զիջում է շուրջ 45.9 %-ով, իսկ 2020 թվականի հաստատված ցուցանիշին գերազանցում է 254.2 %-ով: «Վառելիք և էներգետիկա» խմբի ծախսերի կառուցվածքում, առյուծի բաժինը պատկանում է հենց այս ծախսերին՝ շուրջ 86.9 %:

2021 թվականի բյուջեի նախագծով «Լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շինարարություն» խմբի ծախսերը ծրագրվել են շուրջ 115.4 մլն դրամ, ինչը 550.8 %-ով կամ շուրջ 98.0 մլն դրամով գերազանցում է 2019 թվականի ցուցանիշին և 77.8 %-ով կամ 50.5 մլն դրամով 2020 թվականի հաստատված ցուցանիշին:

«Հանքային ռեսուրսների արդյունահանում, բացառությամբ բնական վառելիքի» դասով պետական բյուջեից 2021 թվականին նախատեսվում է հատկացնել շուրջ 16.9 մլն դրամ, ինչը 2019 թվականի փաստացի ցուցանիշին գերզանցում է շուրջ 19.5 %-ով իսկ 2020 թվականի հաստատված ցուցանիշի հետ նույնական է:

ԱԺԲԳ







2021 թվականի պետական բյուջեի «Շինարարություն» դասով ծրագրված է հատկացնել 98.5 մլն դրամ, ինչը 2019 թվականի փաստացի ցուցանիշին գերազանցում է՝ շուրջ 95.1 մլն դրամով, իսկ 2020 թվականի հաստատված ցուցանիշին 50.5 մլն դրամով կամ կրկնակի անգամ:

Պետական բյուջեի «Տրանսպորտ» խմբի ծախսերի գծով 2021 թվականի նախագծով նախատեսված է հատկացնել 86.6 մլրդ դրամ, կամ տնտեսական հարաբերությունների բնագավառի ծախսերի 58.6%-ը: Ընդ որում, 2019 թվականի համեմատությամբ տրանսպորտի գծով ծախսերը նախատեսվում է ավելացնել 39.6%-ով, իսկ 2020 թվականի ցուցանիշի համեմատությամբ այն նախատեվում է 25.9%-ով պակաս:

Պետական բյուջեի «Կապ» խմբի ծախսերի գծով 2021 թվականի նախագծով նախատեսվում է հատկացնել է շուրջ 310.3 մլն դրամ, կամ տնտեսական հարաբերությունների բնագավառի ծախսերի 0.2%-ը: Ընդ որում, 2019 թվականի համեմատությամբ կապի գծով ծախսերը նախատեսվում է ավելացնել 7.2 %-ով, իսկ 2020 թվականի ցուցանիշի համեմատությամբ փոփոխություններ չեն նախատեսվում:

2021 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրվում է տնտեսական հարաբերությունների բնագավառի «Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ» խմբին հատկացնել 46.3 մլն դրամ: Ընդ որում, 2019 թվականի համեմատությամբ 2021 թվականի ծախսերը կնվազեն շուրջ 165.9 մլն դրամով, իսկ 2020 թվականի համեմատ փոփոխություններ չեն նախատեսվում:

«Տնտեսական հարաբերություններ (այլ դասերի չպատկանող)» խմբի ծախսերի գծով, 2021 թվականի պետական բյուջեից ծրագրվում է հատկացնել 10.5 մլրդ դրամ: Նշված խմբի ծախսերը, կազմում են պետական բյուջեի տնտեսական հարաբերությունների բնագավառի ծախսերի 7.1 %-ը: 2019 թվականի համեմատ 2021 թվականին նշյալ ուղղությամբ ծախսերը կավելանան՝ շուրջ 3.4 մլրդ դրամով կամ 47.1 %-ով, իսկ 2020 թվականի համեմատ՝ կկրճատվեն շուրջ 2.5 մլրդ դրամով կամ 19.2 %-ով:

2021 թվականի պետական բյուջեի «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն» խմբի ծախսերի ցուցանիշը ծրագրվում է ՀՆԱ-ի շուրջ 0.59 %-ի մակարդակում, ինչը 2019 պետական բյուջեի փաստացի ցուցանիշին կգերազանցի 0.1 %-ային կետով, իսկ 2020 թվականի հաստատված ցուցանիշին կզիջի շուրջ 0.3 %-ային կետով:

ԱԺԲԳ







2021 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրվում է «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն» խմբի ծախսերի 43.9 %-ը կամ 17.4 մլրդ դրամը տրամադրել է «Գյուղատնտեսություն» դասի գծով ծախսերին: Նշված ուղղությամբ 2019 թվականի համեմատությամբ ծրագրվում է ծախսերի աճ շուրջ՝ 115.2 %-ով, իսկ 2020 թվականի հաստատված ցուցանիշի համեմատությամբ 2.6 %-ով նվազում:

«Անտառային տնտեսություն» դասով ծրագրված ծախսերը 2021 թվականին նախատեսվում են 1.9 մլրդ դրամ: 2019 թվականի փաստացի ցուցանիշի համեմատությամբ նախատեսվում է ծախսերի ավելացում շուրջ 339.2 մլն դրամով կամ 23.1 %-ով, իսկ 2020 թվականի հաստատված ցուցանիշի համեմատությամբ նախատեսվում է ծախսերի նվազում 53.3 մլն դրամով կամ 2.7 %-ով:

Պետական բյուջեից, 2021 թվականին «Ոռոգում» դասով ծախսերը ծրագրվել են շուրջ 20.4 մլրդ դրամ, ինչը 2019 թվականի փաստացի ցուցանիշին զիջում է 8.4 %-ով, իսկ 2020 թվականի հաստատված ցուցանիշին՝ շուրջ 40.6 %-ով:

Տրանսպորտի բնագավառի բյուջետային ծախսերը 2021 թվականի բյուջեի նախագծով կկազմեն բյուջետային ծախսերի 4.7%-ը, ինչը 1.6%-ային կետով պակաս է 2020 թվականի ցուցանիշից և 0.7%-ային կետով ավել է 2019 թվականի փաստացի ցուցանիշից:

«Տրանսպորտ» խմբի բյուջետային ծախսերի առյուծի բաժինը՝ շուրջ 81.6 մլրդ դրամ կամ 93.6 %-ը նախատեսվում է ուղղել «Ճանապարհային տրանսպորտ» դասի ծախսերին: Ընդ որում, կատարված ծախսերը 2020 թվականի բյուջեի հաստատված ցուցանիշի համեմատությամբ պակաս են շուրջ 29.2 մլրդ դրամով կամ 26.5 %-ով, իսկ 2019 թվականի բյուջեի փաստացի ցուցանիշի համեմատությամբ՝ ավել են 24.1 մլրդ դրամով կամ 42.3 %-ով:

Երկաթուղային տրանսպորտի գծով ծրագրված ծախսերը 2021 թվականին նախատեսվում է շուրջ 407.7 մլն դրամի շրջանակներում, ինչը նախորդող՝ 2019 թվականի փաստացի ցուցանիշին գերազանցում է շուրջ 23.9 մլն դրամով կամ 6.2 %-ով, իսկ 2020 թվականի բյուջի հաստատված ցուցանիշին շուրջ 42.2 մլն դրամով կամ 11.5 %-ով:

ԱԺԲԳ





2021 թվականին, պետական բյուջեի նախագծով «Օդային տրանսպորտ» դասի ծախսերը «Տրանսպորտ» խմբի ծախսերի կառուցվածքում ծրագրված են 1.4 %-ի մակարդակում, կամ շուրջ 1.2 մլրդ դրամ: Հատկանշական է, որ 2020 թվականի պետական բյուջեի հաստատված ցուցանիշի համեմատությամբ 2021 թվականի բյուջեի նախագծի վերոնշյալ ցուցանիշը նախատեսվել է 168.2 մլն դրամով կամ 11.9 %-ով պակաս: Այդուհանդերձ, 2019 թվականի բյուջեի փաստացի ցուցանիշի համեմատությամբ ծրգրված է բարելավում՝ 18.7 %-ով կամ շուրջ 191.6 մլն դրամով:

«Տրանսպորտ» խմբի ծախսերի կառուցվածքում՝ «Խողովակաշարային և այլ տրանսպորտ» դասով ծրագրված ծախսերը 2021 թվականին նախատեսվում են 3.9 մլրդ դրամի շրջանակներում, կամ վերոնշյալ խմբի ծախսերի շուրջ 4.5 %-ը: Նախորդող տարիների ցուցանիշների համեմատությամբ առկա է հետևյալ պատկերը. 2020 թվականի բյուջեի հաստատված ցուցանիշի համեմատ ծրագրվել է ծախսերի նվազում 20 %-ով կամ շուրջ 974.8 մլն դրամով, իսկ 2019 թվականի պետական բյուջեի փաստացի ցուցանիշի նկատմամբ ծախսերը կավելանան 7.9 %-ով կամ շուրջ 285.3 մլն դրամով: